ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ն ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ	Ձմեռային բաճկոն	Ձմեռային բաճկոն	«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ	Անվտանգության աշխատակիցների ձմեռային բաճկոն: Բաճկոնի արտաքին տեսքը կից ֆայլում Մինչև գնային առաջարկ ներկայացնելը մասնակիցը պարտադիր պետք է նախապես ծանոթանա Պատվիրատուի կողմից ներկայացված հագուստի նմուշին և համաձայնեցնի կտորի տեսակն ու գույնի երանգը: Բաճկոնը կարվում է 110 – 140 գր/մ² մակերեսային խտությամբ Օքսֆորդ տեսակի ջրակայուն կտորից: Բաճկոնի կտորի գույնը՝ սև: Բաճկոնի ներքևի կողային հատվածում պետք է լինեն

						45 աստիճանի տակ 2 ներսի գրպան, որոնց մուտքի հատվածը մշակվում է մոտ 3 սմ լայնությամբ մանժետներով: Բաճկոնի կրծքավանդակային աջ և ձախ կողմերում կարված են երկու վրադիր գրպաններ՝ կափարիչներով,: Ձախ կողմի գրպանը բաժանված է երկու գրպանի: Կափարիչները կոճկվում են կոճգամով: Բաճկոնի օձիքը 7-8սմ լայնությամբ, սուրանկյուն եզրերով փռված ծալովի օձիք է՝ հանովի արհեստական, սև գույնի մորթիով: Օձիքի միացումը կոճակներով: Բաճկոնը ունի գլխանոց /կապիշոն/, որը կոճգամներով ամրանում է բաճկոնի օձիքի մասում: Գլխանոցի եզրային մասում անցկացված է քուղ: Բաճկոնը կոճկվում է բարձրորակ պլաստմասե «տրակտոր» տիպի կայծակաճարմանդով: Բաճկոնը և թևքերը ներքևի մասում վերջանում են ռեզինե մանժետներով՝ կտորի վրա ներկարված ռեզինով: Բաճկոնի առաջամասում, ետևամասում և գլխանոցում որպես տաքացնող ներդիր տեղադրվում է 180-220 գ/մ2

						խտությամբ 15 մմ հաստության սինտեպոն որը մգդակված է սև գույնի մետաքսյա աստառի հետ, որի մակերեսային խտությունը պետք է կազմի ոչ պակաս 55-60 գ/մ2 : Միաժամանակ սինտեպոնի և երեսի կտորի միջև պետք կարվի «ֆլիս» տեսակի կտոր որպեսզի սինտեպոնը դուրս չգա: Բաճկոնի առջևի գրպանների վերևում, երկու կողմից կարված են փափուկ երեսով կպչունակներ՝ 3,0×13,0 (±0,5) սմ, իսկ մեջքի վերևի մասում 4,0×28,0 (±0,5) չափերով: Փափուկ կպչունակները պետք է կարվեն երկու խաչաձև անկյունագծով կարերով: Դրանց վրա պետք է ամրացվեն «Անվտանգություն» և «Հանրային հեռուսատընկերություն» ասեղնագործված թևանշանները /շևվրոնները/: Դրանց ֆայլերը կտրամադրվեն Պատվիրատուի կողմից: Բաճկոնի ներսի կողմում՝ ներքևից 15 սմ բարձրության վրա կարվում է նեյլոնից տեղեկատվական պիտակ, որի մեջ նշվում են արտադրողի տվյալները և հագուստի չափսը :

					Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 2 – 3 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Անհրաժեշտ քանականություններն ըստ մոտավոր չափսերի. S – 1 M - 7 L - 5 XL - 5 XXL – 2 Պարտադիր պայման է յուրաքանչյուր աշխատակցի չափսերի անհատական չափագրումը Մատակարարի կողմից: Մատակարարումից 10 օր առաջ մատակարար կազմակերպությունը հասատատման է ներկայացնում արտադրված նմուշը: Մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ՝ գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից մատակարարին: Անհրաժեշտություն առաջանալու դեպքում Պատվիրատուի պահանջով մատակարարի հաշվին կարող է կատարվել լաբորատոր ստուգում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

И / П Армине Овсепян Элбек в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1	-	-	-	-	-